ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐ-Մեդիկա ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/93 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ETHICON™ Generator, Endo	Johnnson&Johnnson	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ Աշխատանքային ռեժիմներ: Գեներատորը պետք է գործի առնվազն երկու ռեժիմում՝ ուլտրաձայնային և բիպոլյար (թույլատրվում է նաև համակցված ռեժիմ): Ուլտրաձայնային ռեժիմ: Սարքավորումը պետք է գործի առանց հիվանդի վրա էլեկտրական հոսանքի ուղղակի ազդեցության: Ծայրադիրի սայրը պետք է իրականացնի երկայնական բարձր հաճախության տատանումներ, որոնց շնորհիվ միաժամանակ իրականացվում են հյուսվածքների հատում և անոթների կոագուլյացիա՝ առնվազն մինչև 5 մմ տրամագծով անոթների համար հիմնական ռեժիմում, իսկ առաջադեմ հեմոստազի ռեժիմում՝ առնվազն մինչև 7 մմ տրամագծով անոթների համար: Տատանման հաճախություն և ամպլիտուդա: Սայրի տատանման հաճախությունը ուլտրաձայնային ռեժիմում պետք է լինի 46–56 կՀց տիրույթում: Սայրի տատանման ամպլիտուդայի կարգավորումը պետք է ապահովվի նվազագույնը 3 մակարդակով: Առավելագույն ամպլիտուդան՝ ոչ պակաս 50 մկմ (կախված միացված ծայրադիրի տեսակից): Բիպոլյար ռեժիմ (դիսեկցիա-

			կոագուլյացիա): Պետք է աշխատի հյուսվածքների վրա էլեկտրական հոսանքի ազդեցությամբ՝ ապահովելով հյուսվածքների կոագուլյացիա և հատում, ինչպես նաև առնվազն մինչև 7 մմ ներառյալ տրամագծով անոթների կոագուլյացիա: Հյուսվածքների իմպենդանսի չափման (հյուսվածքից հետադարձ կապի) համակարգ: Պետք է ապահովի կոագուլյացիայի ցիկլի ինքնաշխատ ավարտը և նվազագույնի հասցնի հյուսվածքների թերմիկ վնասումը: Կոագուլյացիայի ցիկլը պետք է կարող լինի ավարտվել ինքնաշխատ կամ կամային եղանակով: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Գեներատորը պետք է ունենա միացված ծայրադիրների ինքնաշխատ ճանաչման համակարգ՝ առանց լրացուցիչ ձեռքով կարգավորումների պահանջի: Պետք է համատեղելի լինի արտադրողի կողմից հաստատված՝ բաց և լապարոսկոպիկ վիրահատությունների համար նախատեսված ուլտրաձայնային և բիպոլյար ծայրադիրների հետ: Անհրաժեշտության դեպքում համակարգը կարող է ապահովվել ադապտորներով՝ նախորդ սերնդի համատեղելի ծայրադիրների միացման համար: Ծայրադիրները պետք է հնարավոր լինի ակտիվացնել ինչպես ձեռքի կոճակներից, այնպես էլ ոտքի ոտնակից: Ծայրադիրները պետք է կարող լինեն կիրառվել կարդիոստիմուլյատորներ ունեցող հիվանդների մոտ՝ արտադրողի ցուցումների և բժշկական սահմանափակումների հաշվառմամբ: Պետք է առկա լինի գեներատորի, բռնակի և ծայրադիրների ինքնաթեսթավորման համակարգ: Պետք է առկա լինի ներքին ծրագրային ապահովման թարմացման հնարավորություն (USB կամ այլ ինտերֆեյսի միջոցով): Գեներատորի դիմային մասում պետք է առկա լինի գունավոր դիսպլեյ (շփմանն արձագանքող կամ կոճակային կառավարմամբ)՝ հզորության մակարդակի ինդիկացիայով և կարգավորման հնարավորությամբ: Սխալների և դրանց ուղղման քայլերի տեսողական (դիսպլեյի վրա) և ձայնային ինդիկացիա՝ ձայնի բարձրության կարգավորման հնարավորությամբ: Միացման մուտքերը պետք է պաշտպանված լինեն սխալ միացումից, և պետք է առկա լինի շտեկերների

			պատահական անջատումը կանխող լուծում: ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ Սնուցում՝ փոփոխական հոսանք 100–240 Վ, հաճախությունը՝ 50/60 Հց: Մուտքային հզորությունը՝ ոչ ավելի, քան 700 ՎԱ: Ելքային հզորությունը ուլտրաձայնային ռեժիմում՝ առնվազն 100 Վտ, բիպոլյար ռեժիմում՝ առնվազն 30 Վտ (եթե այլ բան նշված չէ ծայրադիրի հրահանգում): Գաբարիտներ՝ ոչ ավելի, քան 20 x 45 x 45 սմ (բարձրություն x լայնություն x խորություն), քաշը՝ ոչ ավելի, քան 10 կգ: Արտադրանքը պետք է համապատասխանի IEC 60601-1 և IEC 60601-2-2 ստանդարտներին: Կորպուսի պաշտպանության աստիճանը՝ նվազագույնը IP21: Երաշխիք՝ նվազագույնը 12 ամիս՝ երաշխիքային կտրոնով և ավտորիզացված սպասարկման կենտրոնի առկայությամբ: Գեներատորը պետք է կոմպլեկտավորվի շարժական սայլակով՝ պարագաների համար նախատեսված դարակով: ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐ Ոտքի ոտնակ (1 հատ): Պետք է լինի երկսեղմակ կամ բազմաֆունկցիոնալ, նախատեսված ուլտրաձայնային և բիպոլյար ծայրադիրների ակտիվացման համար (առնվազն մաքսիմալ և մինիմալ ռեժիմներում): Սեղմակների վրա պետք է առկա լինեն հստակ ռեժիմային նշումներ: Պետք է հագեցած լինի լարի դեֆորմացիան կանխող պաշտպանությամբ և ստորին հատվածում՝ հակասահող ծածկույթով: Երաշխիքը՝ նվազագույնը 12 ամիս: Լապարոսկոպիկ ուլտրաձայնային բռնակ (1 հատ): Պետք է հագեցած լինի պյեզոէլեկտրիկ բարձրորակ տարրերով, որոնք գեներատորի էներգիան վերածում են երկայնական մեխանիկական տատանումների: Պետք է ունենա ծայրադիրի հուսալի ամրացման հանգույց և ճկուն մեկուսացված լար՝ գեներատորին անմիջապես միանալու համար: Պետք է առկա լինի ակտիվացումների հաշվիչ կամ ինքնաճանաչման համակարգ, ինչպես նաև ինքնաթեսթավորման և սխալների կոդերի արտածման հնարավորություն գեներատորի դիսպլեյի վրա: Ակտիվացումը պետք է հնարավոր լինի ինչպես բռնակի կոճակներից, այնպես էլ ոտքի ոտնակից: Երաշխիքը՝ նվազագույնը 12 ամիս: ՓԱՍՏԱԹՂԹԵՐ Մասնակիցը պետք է տրամադրի արտադրողի կամ

			նրա պաշտոնական լիազորված ներկայացուցչի կողմից տրված որակի, անվտանգության և հավաքածուի բաղադրիչների (գեներատոր, բռնակ, ոտքի ոտնակ և հաստատված պարագաներ) լիարժեք համատեղելիության հավաստագրային կամ երաշխիքային փաստաթուղթ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Ар-Медика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/93 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
1	-	-	-